Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Սույն որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի տնօրենին փոխարինող Լ. Զաքարյանի 2025 թվականի հունիսի 4-ի գրությունը, <<Էմմա Ասյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն Ռ. Բարսեղյանի 2025 թվականի մայիսի 26-ի գրությունը, <<Սիսիանի համայնքի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի տնօրեն Ա. Գասպարյանի 2025 թվականի հունիսի 5-ի գրությունը, <<Սիսիանի համայնքի թիվ 3 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի տնօրեն Լ. Հակոբյանի 2025 թվականի հունիսի 5-ի գրությունը, Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի պետ Ն. Հովհաննիսյանի 2025 թվականի հունիսի 3-ի և 5-ի զեկուցագրերը և համայնքի ղեկավարի առաջարկը, ինչպես նաև հաշվի է առնվել Սիսիանի համայնքապետարանի ենթակայության ներքո գործող կազմակերպությունում կատարվող աշխատանքների ծավալը:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ Դ. Այվազյան

05/06/2025թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Որոշման հաստատման դեպքում համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում կկատարվեն փոփոխություններ:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ Դ. Այվազյան

05/06/2025թ